

891.99  
8-15

2992

ԵՐԻՒԱ ՆՈՉԱՐԵԱՆ.

ՀՆՉԻՒՆՆԵՐԸ  
ՀՈԳՈՅՍ

(Բանասեղծութիւններ)

891. 99  
G-15

ԹԻՖԼԻՍ.

1920 թ.

89199

1942

արքայի շահակ  
գնդութեան  
19 NOV 2011.

G-15

ԷՄԻԼԻԱ ՆՈԶԱՐԵԱՆ.

ՇԱՀԱԿԻ ԽՆԵՐԸ  
ՀՈԳՈՅՍԱՀ

(Բանասեղծութիւններ)

ԹԻՖԼԻՍ.

1920 թ.

10.07.2013

45530

ROS VON 81

ԳՐԱՄԻ ՀԱՅԻ

ԵՎԱՐՈՒ

Տպ. Մ ա մ ու լ — տնօրէններ՝ էվրիկեան և Մայիլեան։  
Հորիս-Մելիքեան փող. 22։



13541-87



Շոտաբա կապիտան ԳէՈՐԳԻ

Միակ եղբօրս անմոռ յիշատակին։

Հոգոյս յատակին  
Մի լիճ կայ ըիւրեղ.  
Անցեալս անզին  
Քնած է այնտեղ.  
Քնած է այնտեղ  
Քո պայծառ հոգին...

1919 թ.

\* \* \*

Հոգոյս յատակին  
Մի լիճ կայ բիւրեղ.  
Ան ալս անզին  
Քնած է այնտեղ.  
Քնած է այնտեղ  
Քո պայծառ հոգին...

Յատակ լճակից  
Շիրիմ կերևայ,  
Սէր-յուշ արձանից  
Հրեշտակ կ'ժպտայ.  
Հրեշտակ կ'ժպտայ  
Հոգոյս անհունից...

Անցեալիս գրկում  
Դէմք է փայլոն.  
Լոյս-շողի միջում  
Հոգիդ է ժպտուն.  
Հոգիդ է ժպտուն  
Իմ գրախտ հոգում...

Հոգոյս յատակին  
Մի լիճ կայ բիւրեղ.  
Անցեալս անզին  
Քնած է այնտեղ.  
Քնած է այնտեղ  
Քո պայծառ հոգին...



\* \*

Ես չեմ երգում հաճոյքի համար  
 Եւ ոչ էլ փառքի, անտես, անհամար  
 Խոցերը հոգոյս երբ յանկարծ ելնում,  
 Թունոտ օձի պէս սրտիս են փարւում...  
 Ա՞հ, այդ սև պահին՝ ես մէկիկ-մէկիկ  
 Քնարիս հնչիւնով քաղում եմ քնքշիկ  
 Սրտիս ցաւերը, ցաւերն անվերջ...  
 Ու տալիս թղթին, լուռ թերթին անշէջ:

---

\* \* \*

Բալիկ Շուշիկ,  
 Բոյրն անուշիկ,  
 Ժողովեցի,  
 Փունջ արեցի.  
 Քնարս ձեռիս,  
 Լոյսն՝ իղձերիս,  
 Հոգոյս շնչով,  
 Ցաւերժ տենչով.  
 Անձայն, կոպիտ,  
 Սև Մահին բիրտ  
 Ես յաղթեցի  
 Ու ժխտեցի.  
 Իմ նիւթն անշէջ՝  
 Տիեզերքի մէջ.  
 Հողիս անլաց՝  
 Փնջում անանց:

---

1914 թ.

\* \* \*

Ես սիրեցի սկիզ աչեր,  
Նման կայծող աստղերի,  
Որ կ'շողան օր ու գիշեր  
Ու յաւիտեան չեն մարդու

\* \* \*

Տանը, փողոցում,  
Այգում, թէ գրտում՝  
Ես քեզ եմ ահանում,  
Միշտ քեզ հետ խօսում...  
Ուրախ ժամերիս  
Եւ մէկ էլ յանկարծ...  
Դու ես իմ առաջ  
Մելամաղձ կանգնած...

Բոլորն ուրախ, ժպիտը դէմքին,  
Յուսավառ գալիս յար աղօթատուն.  
Հայեացքը դէպ վեր, ձեռքերը կրծքին՝  
Յրտեր են բացում զթալի Աստծուն...

\* \*

Կուզէի և ես լոյս խորանի մէջ,  
Սուրբ պատկերի մօտ ծնկներիս իշած՝  
Զերմագին խնդրել ճար վէրքիս անշէջ.  
Բայց... ոչ, սիրոյս դէմ՝ անզօր է Աստեած:

1915 թ.

\* \* \*

Հէյ ջան, սարեր, հեռոն անցեք,  
Թողէք, տեսնեմ իմ եարին...  
Հէյ ջան, գետեր, ճամբայ տւէք,  
Թողէք, հասնեմ իմ սէրին...

Ճամբէս դուման, սև գիշեր է,  
Մութ-խաւար է երկնքում.  
Հէյ ջան, լուսին, մէկ զուրս նայէ,  
Արծաթ ծորայ սէր-ճամբում...

Ա'խ, ջան Արեգ, մէկ ինձ լսիր,  
Մէկ դուրս նայիր վըանից,  
Գիշեր ճամբէս ոսկեզօծիր,  
Ինձ մի զըկիր իմ եարից...

Ջան, Աստւած ջան, աղաչում եմ,  
Ճամբայ ձգիր իմ առաջ,  
Դու ինձ օգնի, եարիս հասնեմ,  
Սիրտս բացեմ նրա առաջ...

---

\* \* \*

Որպէս սոխակ՝  
Աչերդ ինձ երգեցին,  
Քնքոյշ սիրտս գիւթեցին  
Ու թողեցին ինձ մենակ...

Որպէս հովիկ՝  
Թախիծն աչերիդ սուլեց,  
Հոգոյս լարերին փարւեց,  
Համերդ կազմեց անուշիկ...

Որպէս նւագ՝  
Հնչիւն սիրտս այդ ժամին  
Ղողանջում էր քո սրտին  
Սէրս անմար, լոյս, յստակ...

Բայց հոգոյս եղեմ  
Լոկ—դատարկ եմ—ձայնեցիր,  
Ստւերի պէս անցար, մարեցիր...  
· · · · ·      Մենակ իմ:

---

ԱՌ, ինչու այսպէս  
Մոլար ու խելառ,  
Թափառում եմ եօ  
Աշխարհէ աշխարհ...

ԱՌ, ինչու լալիս,  
Գոռհում եմ, գոշում  
Ու չգիտեմ հոգիս,  
Թէ ինչ է ուզում...

Բայց... սիրտս երկին  
Փոթորկում, յուղում,  
Աէրս անմէկին  
Թոչել է ուզում.

Բարձը սաւառնել,  
Անցնել ջինջ եթեր,  
Աստղերին վարւել,  
Ցայտել վառ շիթեր...

Ո՞քան անուշ, ո՞քան մուշ-մուշ  
Բուրում էք դնեք, ծաղիկներ.  
Ո՞քան սիրուն, ո՞քան քնքոյշ  
Զարդարում դաշտ ու լեռներ...

Ո՞քան քաղցր ո՞քան վուշ-վուշ  
Բոյր էք լցնում ջինջ հոգիս.  
Ո՞քան հմայիչ, ո՞քան քնքոյշ  
Երադ հիւսում խօլ սրտիս...

Խինդ ու ծաղիկ, երազներ,  
Մուշ-մուշ, քնքոյշ անուրջներ  
Գալիս հոգիս պարուրում,  
Գարնան գալիս հն աւետում ..

\* \* \*

Կենսալից սրտիս անըիծ յատակում՝  
Մի աստղ է ցոլում Սիրիուսից պարձառ,  
Ողջ էութիւնս անվերջ խնկարկում,  
Ձերմութիւն տալիս հոգոյս բոցավառ:

Չկայ սկ գիշեր անարատ սրտիս,  
Ո՞չ էլ հուր մտքիս՝ պաղ-անշունչ ձմեռ,  
Անշէջ լոյսով է շղարշւած հոգիս,  
Որ միշտ թուչում է դէպ անհուն եթեր...

Անամպ են միտքս, սիրտս ու հոգիս,  
Զինջ, անարատ են իղձերս հրածին,  
Լուսով է լիցուն խորանը սրտիս,  
Ողջ էութիւնս լստակ, երկնածին...

Ցոլա դու, աստղիմ, ցոլա, դու առմիշտ,  
Լուսովդ պարուրիր էութիւնս ողջ,  
Որ չթառամի վարդ հոգիս ընդմիշտ,  
Որ չխաւարեն իղձերս բողբոջ...

Հեռու, անսահման անհունի ծայրից՝  
Արեգն է ժպտում սրտիս յոյսերով,  
Լազուր կապոյտի գաղտնալի գլոկից՝  
Անթիւ աչեր են ցոլում յոյզերով...

Ողջ էութիւնս դարձած հուր-հնոց՝  
Առաջ է սլանում շանթ-որոտի պէս.  
Սլանում է դէպ անյայտ—եղեմ ծոց,  
Հմագելու հիւթը ծաղկունքից պէս-պէս...

Եւ իղձերս անվերջ, անթիւ, անհամար,  
Որպէս սրարշաւ, կատաղի մի հողմ՝  
Առաջ են սլանում ճամբով ոսկեվառ,  
Կենսածոր վարդեր սփռում ամեն կողմ...

Անտես ու անյայտ ճամբիս բևեռից՝  
Արեգն է ժպտում յուսալից դէմքով,  
Ամպշող երկնքի փիրուզիայ կրծքից՝  
Աստղեր են ցոլում հոգուս քնքանքով...

Ցոլացէք, աստղեր, թնդ ձեղնով դիւթւեմ,  
Սրտիս ծալքերը լցւին հուր բոցով.  
Ի՞նչ կայ անցեալում, լինչու ետ նայեմ,  
Սլանալ եմ ուզում կեանքի հնոցով:

\* \* \*

Օ՛, թէ զիտենամ, կեանքի ովկիտնում  
Մեր նաւը կ'լողայ սէր-աստղով անշէջ.  
Հսկայ հողմերի փրփրայոյդ գրկում՝  
Անյաղթ կ'մնանք հօծ մարդկու թեան մէջ:

Օ՛, թէ յիմանամ, սիրաշող ջահեր  
Սիրտ խորանի մէջ կ'կայծեն մշտավառ.  
Մեր զբախս հոգու մէջ՝ ոսկէ խոհեր  
Պիտ շողան անմար—արև հրավառ:

Օ՛, թէ հաւատամ, իղձերս չեն ցնորք.  
Երկին-երկրի պէս անբաժան կ'մնանք,  
Ընդմիշա կ'ցոլայ մեր սէրը լոյս-շողք՝  
Կասեմ, առնըր ձեւըգ, ընկեր, միանանք:

13541-07

Առախինն եղաւ լեռան մէջքից,  
Աստղերը հանդարտ պահ մտան.  
Նոր ասագ սոլաց սրտիս խորքից,  
Դիմիքից հոգիս կուռական:

Անխօս լուսնի շուշան զէմքից խենթացած՝  
Բիւր ալիքներ անտակ ծովից բարձրացան.  
Աչը-շող աստղի պայծառ շողքից հմայւած՝  
Խինդ ու աւիւն սրտիս խորքում արթնացան...

Սև ամպն եկաւ, և յուսինը մռայլեց,  
Ալիքները տապալւեցին յուսահատ...  
Սրտիս հրկինք աստղս ցոլաց ու... մարեց.  
Քայլ դեռ լոյս կայ հոգոյս ծոցումն անարատ...



\* \* \*

\* \* \*

Նստած լեռան լանջին, թաւուտի մէջ՝ լսում էի  
գիտի քաղցրահնչիւն ելևջները, ծաղիկների մեղմ  
փսփսիւնը, թռչունների անուշ դայլայլը ու զմայլ-  
ւում...

Ամեն ինչ կատարեալ էր շուրջու՝ Աստւածացած...  
Լուսինն իր անբաժան ընկեր՝ Աստղիկ! Էետ օրօր ու  
շօրոր առաջ էր լողում, անհուն բարձունքից կեանքի  
վիշտն ու երջանկութիւնը դիտում... Շուրջու, համա-  
տարած թերեռվ անդորրն էր իշխում... Բնու-  
թիւնը տիեզերական մեծ սիրոյ երգն էր սուլում...

Ես մենակ էի. ես մի հսկայ վիշտ էի երջանկու-  
թեան ծոցին:

Ներսըս ինչ որ շարժւեց, գալարւեց և անխնայ-  
օրէն սկսեց կրծել սիրտս.

Ծաղիկների անուշահոտ բոյրից, սիրոյ հիասքանչ  
փսփսուկից արթնացաւ նախանձն ու փոթորկեց հո-  
գիս...

Մի անդուսպ տենչ զգացի ոչնչացնելու շուրջու  
ամեն ինչ. չքացնելու տիրող երջանկութիւնը...

Փոքր անց՝ ձնոքիս մի ահապի՞ն ծաղկեփունջ ու-  
նէի... Ես մարել էի հաղարաւոր կեանք... Բայց շուր-  
ջըս դարձեալ գարնմն էր ժամանակ, սէրը՝ զօղանջում,  
հոգիս՝ փոթորկում... .

Փիրնւզ ամպ-շող,  
Աստղեր կայծ-շող,  
Արև անմար,  
Հեռներ շուրջ-պար.

Կազբէկ, ելքրնւս,  
Տիք հոգոյս  
Երազ տեսիլք,  
Անհաս թոփչք,

Հեքիաթ թեր,  
Լոյս-շող իղձեր...  
Հոգիս անշէջ  
Թիֆլիսի մէջ.

Բայց... չ'կայ կեանք,  
Ոչ լոյս ոչ, փառք  
Փշուա ճամբին,  
Թոփ ափին...

Ո՞հ, պիտ մարի  
Հոգիս արի  
Կեանքի միջին —  
Երկրի ճահճին...

Օ, ոչ, բնաւ,  
Լոյս-կոյս անցաւ,  
Զգառումով սուրբ՝  
Կ'լինիմ ասուպ.

Առանց լացում,  
Արև ծոցում,  
Միշտ լիայոյս՝  
Կ'փնտրեմ լոյս.

Երկնային սէր՝  
Անմհոյ, անմեռ.  
Նրա մէջ թռվիչ՝  
Եւ ամեն ինչ...

Հ Ե Ք Ի Ա Թ Ը  
Հ Ո Գ Ո Յ Ս

Հ Ե Ք Ի Ա Թ Ը Հ Ո Գ Ո Յ Ս Ա

... Ու գնում էի, որքան—չգիտեմ և հասել էր  
սրբագան բնութեան հրաշագեղ դաշտին։ Շուրջս աստ-  
ւածային ձեռքերով կանաչ գորգ էր փռած։ չկար մի  
ծաղիկ, որ սէր չերգեր կոյս թաւուտի մէջ ու չհամ-  
բուրւէր քնքոյշ հովի հետ... գետակն անուշ խոխոջա-  
լով ցած էր գազում լեռան կրծքից ու իր քաշագոր-  
ծութիւնները դաշտին պատմելով՝ մայր ծովի գիրկն  
էր շտապում։ Զքնաղ Արեգը հուր-վարսերը փռած՝ փար-  
ւում, շոյում էր բնութեանը թովիչ ու ողջը՝ շիկնում  
նրա սուրբ համբոյը ից...

Ու գնում էի այս անսման դաշտով։ ճամբաս էր  
անվերջ, հմայքն՝ անսահման...

Յանկարձ դէմս ելաւ մի ձերժակ ձերուկ, ասես,  
—որդին էր ձմռան—...Արծաթազօծ միրուքը շուելով՝  
հանդարտ մօտեցաւ, անժպիտ ասաց.

— Աղջիկս, այդ ժւր ես գնում այս անծայր ճամ-  
բով—:

Նրա ճայնն աշնան սւեզն էր յիշեցնում. բայց  
գարուն էր շուրջս, անսման գարուն...»

— Ես, ձերունի, դէպ անմահութիւնն եմ գնում,  
դէպ մեծ յաւիտենականութիւնը...»

— Ե՛տ դառ, աղջիկս—, սւսւաց, նորէն՝ անմահու-  
թիւնն այստեղ է, այս հրաշագեղ դաշտում, բնութեան  
հիասքանչ ծոցում. իսկ այնտեղ... այնտեղ ման է լոկ  
անմահ, խաւարն իշխող...

Ե՞տ դառ, աղջիկս, քանի չես կորցրել զարունը  
կեանըիդ...

Կանգնած էի շանթահար, հայեացքս յառած նրա  
ծով աչքերին, ուզում էի նրա հոգու խորքերը տես-  
նել, նրա խօսքերի իմասը պարզել, բայց ..

—Ե՞տ դառ, աղջիկս,—սւսւաց նորէն ու անհայ-  
տացաւ...

Երազ էր, տեսիլք, չար խարէութիւն, թէ բարի  
սրտի անկեզծ ցանկութիւն...

Ի՞նչ փոյթ, հոգիս ծարաւ է սուրբ անմահութեան  
ու առաջ կերթամ:

այց եթէ իրօք մահն է լոկ անմահ, խաւարն  
իշխող... և այդ բոլորը սեւ, ցուրտ գերեզման...

Ոչ, անկարելի է, հոգիս ձգտում է մեծ անմա-  
հութեան, սուրբ գեղեցկութեան և անշէջ լոյսի ու...  
գնում էի:

Երեկոյ էր: Գարնանային սքանչելի երեկոյ, չեռ-  
փց լսում էր սիրահար սոխակի դայլային անսուշ, նըն-  
ջում էր դաշտը հեք հովին փարւած. ժպտագէմ արել  
մետաքս փեշերը հաւաքելով՝ անհունի գիրկն էր շատ-  
պիւմ. ամպերը շիկնած՝ ճամբայ էին ձգում, ու անտես  
հեռւից գիշերը խելահեղ առաջ էր սլանում, ու քօղի  
տակին; գոնէ մէկ անգամ լոյս-կոյս արեփց համբոյր  
առնելու...

Եւ գնում էի յոգնած, ուժասպառ, մեծ ճանա-  
պարհով...

Յանկարծ լսեցի մի ձիու դովիիւն: Կանդ առայ  
իսկոյն.—սև մահը չ'լինի...—, շանթորոտի պէս մտքովս  
անցաւ...

Առաջս՝ ճերմակ ձիու վրայ՝ մի պատանի էր լուս-  
նի արծաթեայ շողբով ողողւած, տաես.—երկնից էր ի-  
ջած...—

Կայծակի արագութեամբ, զեփիւոի մեղմութեամբ՝  
յած թռաւ ձիուց. չինար բուսաւ...

Նա փաթաթւած էր կաթնափրփուր ծածկոցում,  
պիխին, ասես. արեն էր շողում բիւր նազանքներով,  
և մարմարակերտ վեհ ճակատի տակ՝ զոյգ փիրուղ ծո-  
վեր ծփում էին հանգարտ...

... Կանգնած էի՝ ինքս ինձ մոռցած. ես արբած  
էի լոյս գեղեցկութեամբ...

Յանկարծ՝ զգացի անմահան ձայնի թովչանքն ա-  
նուշ...

—Ասա, մի ես դու և մւր ես գնում այսպէս ուշ  
պահին...

Կարծես սոխակն էր կոզքիս դայլայլում...

—Ե՞ս գէպ անմահութիւն, դէպ մեծ յաւիտենա-  
կանութիւնն եմ գնում. բայց մի, այնպէս յոգնած  
եմ, այնպէս յոգնած...

—Լսիր, ես գարձիր, քեզ սուտ են ասել, անմա-  
հութիւնը հէնց այս է, որ կայ՝ գիրկը սուրբ բնու-  
թեան, լոյս գեղեցկութեան, իսկ այնտեղ... այնտեղ  
մահն է լոկ անմահ, իստարն իշխող...

Ահա մեր շուրջը բնութիւնն անմահ սուրբ գե-  
ղեցկութեամբ. և թնչն է անմահ, քան լուսինը հեզ,  
անհունը՝ ամպշող, աստղերը՝ կայծող, հովը՝ նապելի և  
բիւր ծաղիկների բուրմունքն՝ անուշ...

Եւ ի՞նչ կայ վսեմ, սուրբ, աստածային, քան  
սէրն անշէջ, սէրն երկնային...

Իսկ մենք... մենք երազ ենք միայն, մի չընազ  
երազ անսկնզը ու անվերջ... Մենք գտնուում ենք բնու-  
թեան տաճարում ու պիտի ապրենք լոյս գեղեցկու-  
թեամբ, քանի շնչում ենք այս երազ կեանքում ու ե-  
րազ ենք մենք...—:

—...Ու պիտի ապրենք, քանի շնչում ենք այս  
երազ կեանքում ու երազ ենք մենք...—, շնչում էին  
շուրթերս, իսկ հոգիս... հոգիս ալանալ էր ուզում ան-  
մահ բնութեան գիրկը գեղանի ու ձուլւել նրան...

Հովի թևերով արծաթ ծածկոցն ուսերից առաւ,  
փռեց երկրի կրծքին:—

— Նստիր, դու յոգնած ես անչափ—, մեղմ, հովի  
նման շնջաց ականջիս...

Յոգնած նստեցի կուսական ծածկոցին... Ո՞րքան  
հիասքանչ էր բնութիւնն այդ պահին, և մենք նրա գե-  
ղանի ծոցին: Կուսինն ամեն կողմ արծաթ էր ծորում,  
ասես, հմայել էր ուզում մեղ բոլոր հրաշքներով...

Աստղերը ժապուն, հանդարս թրթիով, սէր էին  
երգում լազուրի գրկում...

Ու մենք՝ երկու չքնաղ երաղներ, անմահ բնու-  
թեան անշեղ խորանում՝ անզուգական օրհներգն էինք  
լսում, զմայլուում...

Ովկիան երջանկութեամբ էր լցւած հոգիս. վաղը  
պիտ ելնէի նոր թափով, նոր ձգտումներով երազ  
կեանքիս մնացորդն ապրելու...

Ո՞րքան հրաշալի է այս կեանքը երազ...

1919 թ.

\* \* \*

Ցանկարծ զարթնեցի. .

Երազիս տեսայ,

Զայնը լսեցի. գալիս էր ինձ մօտ

Ու այնպէս կարօտ,

Այնպէս ջերմ սիրով նրան առաջացայ...

Հանդմբառ մօտեցաւ.

Երկու ձեռքին ծաղիկ բոնած

Ու ինձ մեկնած՝

«Ահա ծաղիկներդ», շշուկով ասաւ...

Բոնեցի միայն

Բազուկը դալուկ ու աչքերի մէջ՝

Սուրբ լոյսն անշեղ

Տեսնել ուզեցի. բայց... երազ էր այն.

Ցանկարծ զարթնեցի...

\* \* \*

Եկ, սիրելի Յուշ,  
Հինը բեր մտքիս,  
Միայն թէ, զգայշ...  
Զայն չտաս սրտիս.  
Նա շատ է քնքոյշ...

Կամացուկ ինձ բեր  
Վաղանցուկ օրերս,  
Միրելի գէմքեր...  
Եկ, յարի իղձերս,  
Հոգոյս տուր թևեր...

Եկ, անոյշ փարւիր  
Հեք հոգոյս լքւած,  
Եկ, շնչաւորիր  
Հաւատս մարած,  
Եկ հինը սուլիր...

Ի՞նչ դատարկ կլինէր  
Այս կեանքը նիւթով,  
Եթէ չլինէր  
Սուրբ ձեռքզ ինամող.  
Հոգիս կ'մարէր...

Եկ, սիրելի Յուշ,  
Հինը բեր մտքիս,  
Միայն թէ, զգայշ...  
Զայն չտաս սրտիս.  
Նա շատ է քնքոյշ...

\* \* \*

Երկինը՝ Թխպնտ,  
Արեն՝ անփայլ,  
Հոգիս՝ վշտնտ,  
Մենակ, մռայլ...

Անմար լոյսի  
Ես ձգտեցի  
Ու... մեկուսի  
Միշտ մնացի.

Մարած իղձ, յնյս,  
Լքնւմ, ցաւեր՝  
Եղան հոգոյս,  
Միայն ընկեր...

\* \*

Հանգիստ առ, իմ սիրու,  
էլ մի վախենայ.  
Մահին դաժան, բիրու  
Մեսցրի անխնայ...

Փնջել եմ առաջին  
Ծաղկներս անշէջ.  
Ժպտոն նրանց միջին՝  
Կապրիս դու անվերջ...

Փնջում եմ ահա նոր ծաղիկներ լիս  
Ու այս փնջիս մէջ, քեզնից անբաժան՝  
Կապրի և լոյս-կոյս հոգիս  
Ու երկուսդ էլ կ'շողաք յաւիտեան...

Հանգիստ առ, իմ սիրու,  
էլ մի վախենայ.  
Մահին դաժան, բիրու  
Մեսցրի անխնայ...

\* \*

Ովկեան երկին, արգեօք գիտե՞ս  
Գոնէ մի հատ իմ վերքերից...  
Փոթորկնդ ծնվ, արգեօք ունե՞ս  
Գոնէ մի հատ իմ խոցերից...

Կայծնդ աստղեր, արգեօք ունե՞ք  
Գոնէ մի հատ իմ մրմռւսից...  
Հսկայ լեռներ, ունեցել էք  
Գոնէ մի հատ իմ կորուսից...

Ճտժբնըդ լուսին, դու տիսե՞լ ես  
Գոնէ մի հատ սկ վիշտ-հնոց...  
Անմար արե՛, դու ծանօթ ես  
Հոգու լըման արեւն ու բոց...

Երջանիկ ես դու, Տիեզերք,  
Դու հեռու ես ճահիճ կեանքից,  
Դու անվիշտ ես, անցաւ, անվէրք,  
Դու հեռու ես մարդ-դազանից...

\* \* \*

Օ՛, սուրբ մոռացում, ուր ես, հասիր ինձ.  
Կամացնեկ իջիր կուսական հոգոյս,  
Հովի պէս փարւիր վիրաւոր սրտիս,  
Մեղմ օրօր ասա, սուլի չեղած յոյս...

Սնդուր, նըբահիւս թևերիդ տակին  
Ա՛խ, սիրաս խոցոտ թնդ քնի մուշ-մուշ...  
Իմ լըւած հոգին գրկիր ջերմագին,  
Մի չեղած աշխարհ դայլայլիր անուշ,

Ուր սէր, լնյս, ծաղիկ հիւսուած քնքանքով,  
Միշտ ժպտան, բուրեն կեանքիս ծաղկոցին,  
Ուր սոխակներն անաս բերկրանքով,  
Անվերջ դայլայլեն վարդերի ծոցին.

Ու որպէս աստղը փիրուզ եթերից  
Հանդարս թրթիռով ջինջ լոյս է ծորում  
Մի բիւրեղ հոգի ճամբիս քեսից  
Սէր ծորայ հոգոյս, քնքոյց, անմարում...

Օ՛, սուրբ մոռացում, ուր ես, հասիր ինձ.  
Կամացուկ իջիր կուսական հոգոյս,  
Հովի պէս փարւիր վիրաւոր սրտիս,  
Մեղմ օրօր ասա, սուլի չեղած յոյս...

\* \* \*

Լոիր, հոգիս, քնիր անդուրը,  
Թնդ ինձ ապրեմ չեղածով...  
Մեր կեանքը՝ սին, ճամբէն՝ մոլոր,  
Թնդ ինձ խնդամ երազով...

Թնդ յազենամ կեանքով ունայն,  
Լոյս-արեի շնդիրում...  
Վերջը՝ ման է, յուրատ գերեզման,  
Թնդ ինձ ժպտամ եթերում...

Մէկ օր կփարւի մե իժը քեզ՝  
Կուզես էլ կեանք, բերկլութիւն...  
Կուզես արև ջերմ, լուսերեն,  
Բայց... չես զանի փրկութիւն...

Լոիր, հոգիս, քնիր անդուրը,  
Թնդ ինձ ապրեմ չեղածով...  
Մեր կեանքը՝ սին, ճամբէն՝ մոլոր,  
Թնդ ինձ խնդամ երազով...

\* \* \*

Ա՞լս, ի՞նչ լաւ կ'լինէր,  
Մէկը հոգոյս ջերմ փարւէր,  
Սուրբ երազով ինձ կանչէր,  
Հոգոյս դիւթւած ականջէր...  
Ա՞լս, ի՞նչ լաւ կ'լինէր...

Ունայն կեանքը մոռացւէր,  
Հոգիս լոյս-սիրով լցւէր,  
Զեփիւոի թևեր առնէր՝  
Դէպ վեր, հեռու սաւասնէր...  
Ա՞լս, ի՞նչ լաւ կ'լինէր...

Մի լոյս հոգի ինձ կանչէր,  
Սուրբ երազով ականջէր,  
Հոգիս անմար սէր լցւէր,  
Ունայն կեանքը մոռացւէր...  
Ա՞լս, ի՞նչ լաւ կ'լինէր...

\* \* \*

Ո՞ւր է արել ջերմ ու բոցեղէն,  
Որ սոկի ցայտէ կեանքիս սե-զիշեր.  
Ո՞ւր է այն աստղը պայծառ, լուսեղէն,  
Որ մեղմ առկայծէ հոգոյս ջինջ-կթեր:

Ո՞ւր է սոխակը, որ օրօր առէ  
Կեանքիս փոթորկին, վշտիս անմեկին.  
Ո՞ւր է այն երգը, որ հպարտ հնչէ,  
Անաս հմայքով դիւթէ իմ հոգին:

Ո՞ւր է այն ողին, որ հզօր թափով՝  
Փշրէ ականջիս զօղանջը մահւան.  
Ո՞ւր է այն ձեռքը, որ սուրբ քնքշանքով՝  
Լոյս-ծաղիկ լցնէ սև փոսն ունայն:

Ասէք, կմյ, կ'գմյ սրբազան կոչիս,  
Կտմյ հուր երդեր քնարիս անմէկին,  
Կ'փարւի՞ քնքոյշ անշէջ իղձերիս,  
Ետմյ նոր թոհչը հոգոյս ջինջ, երկին.

## ԱՆՀՈՒՆՈՒՄ.

Հեռու, շատ հեռու, անտես վայրերից, խրնիստ ու հպարտ, սէգ լեռան զլիին ծաղկունքով պատաժ հսկայ ամբողից՝ դուրս եկաւ Գիշերը սև քօղի տակին։ Գուշնատ ու դողդն նա առաջ անցաւ դաշտ, լեռ, ձնր, անտառ սև քողը գլխին, և ամբողջ ճամբին ոչ ոք իմացաւ երկնային գտուր վեհ սիրահարին։

Առաջ է գնում գողգոջ քայլերով, գիշերը մոռայլ լրւու և համբացած, անյատ վայելքի բուռն տենչանքով, ոսկեցող փերու յորդ սիրով լցւած։ Առաջ է սլանում Արեգի գրկումն անվերջ ապրելու, հրան շնչելու և աստւածային վսեմ անկողնում՝ անզուսպ տենչանքին յագեցնում տալու...

Բայց նա չի ուզում իր երջանկութեան, վսեմ վայելքին մասնակից անհել ոչ մի էակի. Նա վախինում է երկրի էակից և ամեն ինչից, անպամ և ծաղկից անհաս գաղտնիքը ծածկելու համար՝ աշխարհի վրա, բոլոր ծայրերից սև քողի նման ձգում է խաւար...

Եւ այսպէս անվերջ, լցւած յորդ սիրով՝ գիշերը հեալէն փերուն է ձգտում, երկրին քող ձգում գողցոյն ձեռքերով՝ երկինք ու երկիր մէկ-մէկից զատում...

## ՄԵՐ ՕՐԵՐԻ Ն.

Գունատ ու նիհար, ոսկրացած գէմքով, բոկհան, կիսամերկ լաց-աղաղակով, առաջ է շարժւում մարդկային շղթան, քաղցած ու ծարաւ, մէրկ, անապատան։

Դաժան ճակատագրի բիւր զարկերի տակ՝ առաջ է շարժւում մարդկային շղթան տիսնւր, յուսահամտ...

Եւ չգիտէ նա, թէ մւր է տարւում ոլոր ու մոլոր, մէծ ճանապարհով և ինչ որոնում... բայց փոյթ չէ նրան։

Առաջ է գնում, թողնում իր յետե բռնոր ոտղմբ զաշտն անհնաւն, անհամար դիակներով լի; ուր իշխում է միայն հասաչ, հեծկլտանք, սպանութիւն և մահ, որից սարսափած արեգը նազան ծածկել է գէմքը մոռայլ քողով։

Լուս է ամեն ինչ... Մեծ ուզմի զաշտում՝ մահն է միայն իշխում մամեն տեղ. դիակների վրայ հսկայ արձիւը՝ ճախրում անհունում փուած թիերով, և կարծես հսկում գետին տարածւոծ համբ կեանքերին... Լուս է ամեն ինչ, չկայ և մի ձայն... անցնում է շղթան, գնում է առաջ, լրւու և համբացած...

Յանկարծ լսում է մարդկային մի ճիչ, մի սըստաձմելիկ, տիսնւր աղաղակ ու աղմկում է ճանապարհն անդո՞ր...

Օ՛, այստեղ մայրը կիսախելակար առաջ է վա-

զում, բազուկներն առած փոքրիկ տղային. որ կիսարկենդան քաղցից, ծարաւից արդէն փչում է իր շունչը վերջին...

Իսկ մի քիչ հետև՝ փուել է գետին ծերուկը խեղձիկ, ձիւնապատ գլխով, ճերմակ ալիքով, անշնչնչ, անկենդան, քաղցած, թուլացած...

Աւելի հեռուն՝ փոքրիկ երեխան արիւն է թափում սիրուն աչերից և բոբիկ, խոցնտ, փոքրիկ ոտքերով վազում այս, այն կողման կանչում է մօրը, որ գուցէ վաղուց փշել է արդէն իր շունչը վերջին, ամայի ճամբին...

Եւ այսպէս անվերջ մարդկային շղթան առաջ է շարժւում, փախչում անդադրում այս գաժան կեանքի բիւր հարւածներից ոլոր ու մոլոր, մեծ ճանապարհով...

Լուռ է ամեն ինչ... տխուր, ամայի... և միայն շղթան, շղթան մարդկային, առաջ է շարժւում մեծ ճանապարհով, անդորր որոնում...

\* \* \*

Ինձ գէնք տւէք, կուզեմ կուել,  
Կուել անվերջ, անդադրնում...  
Իմ ոյժերը կուզեմ փորձել  
Այս մեծ-կեանքի ովկեանում:

Ինձ թի տւէք, ողջ պողպատէ,  
Թիավարեմ սուրբ նաւակս.  
Թիւր ալիքներ պիտ խորտակէ  
Հզօրագոյն այդ թիակս...

Ովկեան կեանքի անափ գրկին  
Ալեկոծնդ, փոթորկնդ,  
Նաւս կ'լողայ հպարտագին  
Ընդգէմ ալեաց մրրկող...

Առագաստս անյաղթ բացած,  
Հզօր թիակը ձեռքիս՝  
Նրանց կ'նետեմ անշնչացած  
Ազւտութեան սուրբ ճամբիս...

1919 թ.

\* \* \*

Հեռու ինձանից, մարդ, քո օրէնքով,  
Օրէնք մարդկային...  
Լաթի մի կառը, սղջ լի գարշանքով,  
Շղթայ ստրկային...

Եւ մարդն ապիկար, ցնի, զազանային  
Ի՞նչ հզօրութեամբ  
Կաշկանդում է նմանի հոգին  
Եւ ի՞նչ բերկրութեամբ...

Ո՞հ, կայ աւելի նենգաւոր գազան,  
Քանի մարդն անխիղճ.  
Այլ կեանքի տղընուկ, սրիկայ է միայն,  
Մարդ-հոգու դահիճ:

Հեռու ինձանից, օրէնք մարդկային,  
Շղթայ գարշապար...  
Սպաս է հոգիս, ջինջ, սստւածային,  
Էռւսկդէն, անժամ:

---

\* \* \*

Օ՛, տւէք ինձ անվերջ թոփչը,  
Թոչեմ հեռու, եթերին,  
Օ՛, տւէք ինձ չեղած տհսիլք,  
Փարւեմ կայծող աստղերին...

Օ՛, տւէք ինձ մի երազ օր,  
Որ առեն ինչ մոռանամ,  
Օ՛, տւէք ինձ արբում հզօր,  
Որ գինովամ, խենթանամ...

Տւէք ոպի թոչեմ հեռու,  
Բարձր, անտես անհունը լիս.  
Ենեմ վերը չհասնելու,  
Նոր լոյս տամ սուրբ իղձերիս.

Ու ի՞նքս լոյս, ելած երկրից,  
Շողամ անշէջ, նոր արև,  
Սուրբ-սէք ծորում, ջինջ եթերից,  
Միշտ լոյս ցայտեմ ձեզ պարզե...

---

Ախ, ինչպէս լաւ էր,  
Երբ գեռ մի անմեղ մանուկ սիրասուն  
Չերժ սիրում էի շնիկիս անասուն.  
Սյդ շատ վաղուց էր...

Այն ժամ մի անհոգ մանուկ էի ևս  
Եւ սիրում էի բնութիւնը թովիչ,  
Աստղերը՝ կայծող, հրեշտակներն՝ անտեր,  
Լուսինը՝ դալուկ, ծաղիկ... ամեն ինչ...

Անմեղ երեխայ՝ հրեշտակ էի ևս.  
Մէկ օր ինձ բերին մի սիրուն շնիկ.  
Սրան էլ սիրեցի լոյսաստղերի պէս  
Եւ նա ողջ սկ էր՝ կոչեցի «Սկիկ»:

Երբ նայում էի երկնին աստղագեղ,  
Կամ լինում էի տխուր, վշտալի...  
«Սկիկ» էլ ինձ էր նայում խելայեղ,  
Համբուրում ձեռքերս ջերմ ու քնքշալի:

Նա միշտ ինձ հետ էր, ինձ մօտ, անբաժան,  
Եւ գիշերներն էլ քնում էր ինձ հետ.  
Բայց մէկ օր մարդիկ, ծ մարդիկ դաժան,  
«Սկուկիս» տարան, կորցրին անհետ...

Ազգբում տխրեցի, նոյն իսկ լաց եղայ.  
Բայց յետոյ նրան մոռացայ իսպառ  
Ու շուտով ճերմակ մի կատեկ գտայ  
Եւ սրա անունն էլ դրեցի «Պայծառ»:

Մէկ օր փայտացաւ «Պայծառիկ» էլ...  
Ու սրան էլ տարան, ձգեցին Քուռը.  
Էլ չէի ուզում սիրել... արտասել...  
Ժամանակը տարաւ և այս մըմուռը...

Արդէն մի ամբողջ տարի էր լրանում,  
Ինչ կորցրել էի սիրուն շնիկիս  
Ու մի պայծառ օր՝ գալոց էի գնում...  
Յանկարծ մի սկ գունդ փարւեց ոտքերիս:

## Կ Ե Ա Ն Ք.

Ի՞նչ է կեանքը... մի անափ ովկեան, ուր բախտն  
անտես, ձեռքին մի պնակ՝ միշտ քարշում է քեզ... լո-  
դում ես. վայրկեան՝ պապտի շուրթերով կառչում ես  
եզրին ուկէ պնակի ու անվերջ ծծում...

Եւ յանկարձ՝ չկայ. տեսիլը էր—մարեց: Նայում  
ես շուրջզ, լալիս ես, հեծնում... Ու նորէն նեռու ափից  
յայտնւեց՝ նա քեզ է կանչում... Լողում ես կրկին.  
խենթ մեղքի նման ծծում ես անվերջ, սակայն ոչ  
մեղք՝ այլ արցունքներդ. կեանքի ովկեանում, ուկէ  
պնակի մէջ՝ քն իսկ արիւնը, հած տանջանքներդ:  
Ծծում ես անյագ ու նորից... չկայ պնակը զիւթող.  
միրաժ էր, անցաւ... Հեռու ափերից գիշերն է վազում.  
ինեւն, սևաճեր. բաղդը յազմական խաւարի զրկին մի  
նոր ժպիտով հմայում է առաջ...

Մոլիգին թափով լողում ես կրկին ու... քեզ են  
կանչում մի շիրիմ, մի խաչ:

Նայեցի... օ, հրաշք, այն իմ «Սկիկն» էր  
Ու այնպէս կարօտ լիզում էր ոտքերս...  
Այսպէս մրմնջում... լցւան աչքերս...  
Սրտանց գրկեցի ու շունս սիրուն,  
Սեղմեցի կրծքիս ու... վազեցի տուն:

Տարիներ անցան... Ես ձաշակեցի  
Միրը մարդկակին՝ սէր, միշտ ու կարօտ,  
Մէրը՝ ծնողի... Ես ձանաշեցիս  
Եւ սէրը կնոջ ու այդ այնքան մօտ...

Ու այն «Սկուկիս» շատ սիրեցի ես  
Եւ այժմ էլ աչա յիշում եմ չնիկիս,  
Որ ամբողջ տարին չմոռացաւ պատկերս  
Ու այնպէս կարօտ վարւեց ոտքերիս...

Ա՛խ, ինչպէս լւա էր,  
Ֆրք գեռ մի անմեղ մանուկ սիրասուն  
Զերմ սիրում էր չնիկիս անտառն.  
Ափսոս անդաբձ էր...

Նստած որբիկ,  
Ասես.—ծաղիկ—  
Յար նայում էր  
Դիմաց մայթին,  
Ուր կանգնած էր  
Ջահել մի կին.  
Ունէր գրկին  
Ճերմակ շնիկ,  
Գանգրամազիկ,  
Թաւիշ փնջով  
Գլխին տնկած,  
Ջանգիկ կաշւով  
Վզից կախած.  
Ողջ զարդարւած...  
Նախանձում էր  
Որբիկն անտէր  
Շնիկին սիրուն,  
Գրկին կնոջ,  
Իսկ նէ ժպտուն,  
Թիթեռ բողբոյ,  
Երջանիկ ողջ...  
Ունէր գրաւիչ,  
Ժպիտ թովիչ,  
Հայեացք քարշով,  
Ջարդեր, շպառներ,  
«Մարդ» փայփայով,  
Շնիկ էլ ունէր...  
Էլ լնչ ուզէր...

---

\* \* \*

Լուռ նստած եմ պատուհանին,  
Անհունը ջերմ գրկած լուսնին,  
Աղամանդով ողջ զարդարւած  
Նայում է ցած:

Կայտառ Քոի հեռու ափից,  
Արևելքի զունա-դափից,  
Անթիւ ձայներ ենում գալիս՝  
Տաղ են ասում մեղմ ականջիս.

Մէկ էլյանկարծ՝ թնդնւմ, տզ' զնւմ  
Տմբտմբալչն հեռուն վազում,  
Ելնհւմ քնքոյշ հովի ուսին՝  
Անցնում, ձուլում են խաւարին:

Լուռ, հայեացքս ձգած հեռուն՝  
Ականջում եմ դափ ու զունուն.  
Հողիս քնքոյշ փարւած մտքիս՝  
Մեղմ շուկով հարց է տալիս.

— Կ՞յս է արդեօք սուրբ երազով՝  
Եարին անցնում դափ ու զունով,  
Թէ մի անմեղ, մի լոյս մանուկ  
Չսն է տրուում կեանքին խղճուկ...

Շուշան լուսինն նայում է սուս,  
Ականջում է երկիրն անյոյզ,  
Հեռուից անթիւ ձայներ գալիս՝  
Տաղ են ասում մեղմ ականջիս...

---

\* \* \*

## Գ Ա Բ Ա Խ Ե Վ .

Թիկն տւած հպարտ, սարերի կրծքին  
Կանաչ գորգի վրայ գարունն է նուտել.  
Բակէ ժպիտը հրաշազեղ դէմքին  
Երգ ու ծաղիկներ շուրջը բոլորել:

Եւ ծառ ու ծաղիկ հարսի պէս զուգւած  
Սէր են փսխում սուրբ խորանի մէջ.  
Հաւքերն աւ առ, աւիւնով արբած  
Տաղեր են ասում բերկրանքով անվերջ:

Զրերը խոխոնջ, կոհակ առ կոհակ  
Առաջ են վազում, կայտառ մանկան պէս.  
Հովերը քնքոնյշ, համբոյրով յստակ  
Գեղանի դաշտին փարուսմ սիրակէզ...

Անմահ Տիկորի խանդավառ զրկից  
Հնչում է սիրոյ զօղանջն անուշ.  
Անափ փիլուզի լուսեղէն ծոցից  
Ոսկեվարս փերին ժպտում է մուշ-մուշ...

Եւ հոգիս զիւթւած, անաս բերկրանքով  
Ծնկի է գալիս սէրբորանի մէջ.  
Օրհներգ է ասում սուրբ գեղգեղանքով,  
Լոյս-պսակ ձօնում գարնանն անշէջ:

Ի՞նչ սիրուն ես,  
Հարս-զարդ Թիֆլիս,  
Ի՞նչ ուրախ ես,  
Կոյս-մայր, հոգիս,

Ողջ ողողւած  
Արև լուսով  
Հարս՝ զարդարւած  
Անմեղ Ժպտով. .

Պար են բոնել  
Լիոնիը մէկ օր՝  
Ալբերտ մարել  
Բո շուրջ-բոլոր...

Տեսել է քեզ  
Երկինն անհուն  
Թռել, ասես,  
Կախւել ժպտուն... .

Յօղում է քեզ  
Փերին երկնի,  
Որ միշտ լինես  
Կոյս-գեղանի...

Ի՞նչ սիրուն ես,  
Հարս-զարդ Թիֆլիս,  
Ի՞նչ ուրախ ես,  
Կոյս-մայր, հոգիս...

\* \* \*

### ՄԵՆԱԿԹԻՒՆ.

Պատուհանին նստած տխուր  
Նայում եմ զուրս.  
Ողջ թիվլիսը մռայլ է, լուս,  
Նման հոգոյս.

Արևուտքում հրդեհում է  
Մի ոսկէ գիծ.  
Ասես.—Միրուց փոթորկում է  
Լոյս-կոյս անբիծ.—

Անհունը գորշ քօղի տակից՝  
Դիտում է սուս...  
Ասես.—Նա էլ է բաղդակից  
Մենակ հոգոյս—...

Ու յանկարձ երկինը հանդարտ  
Զերմ արտասւեց...  
Ի՞նչը խոցեց, արդեօք ու դմբդ...  
Հոգոյս լսեց...

### ԳԵՂԱՀՆԱԿ.

Երկին ու երկիր փարւեցին իրար՝  
Չուլւեց մի հրեշտակ աղջիկ հրաշագեղ.  
Նա մի արձան էր լուսաթոր, մարմար,  
Արտացոլում էր անհունն աստղագեղ:

Անփայլ էր արել նրա ոսկէ գլխին,  
Լուսինը՝ մռայլ, սոխակը՝ անձայն,  
Փիրուզն աչքերի չունէր ջինջ երկին.  
Անհուն էր վարդը նրա ձեռքին շուշան:

Երգիչը տեսաւ ու հոգով դիւթւած՝  
Լոյս-կոյս աղջկան ձուկեց բնութեան,  
Եւ մարդկութեանը լսեց զմայլւած՝  
Գովքը գեղեցկի, ոռորք անմահութեան:

Քէֆ սարքեց մէկ օր Արքայից - Արքան  
Ու կայձ երգչին էլ հրաւիրեց իր մօտ.  
Սյդ ճոխ խնջոյքին շատ մարդիկ եկան.  
Զարդն էր կանանց աղջիկը հօրոտ:

Ու թնդաց քէֆը. Ի՞նչ երգ ու պարեր...  
Հին աստւածներն էլ այդ չէին տեսած.  
Շամպայն ու գինի, հրածին համբոյրներ՝  
Հրդեհում էին ոգին իշխանաց...

Հնչեց պարերգը, ելաւ և փերին.  
Հովի պէս պատեց, թերը բարձած,  
Բոլոր աշքերը դամեց ոտքերին՝  
Նազով փոթորկեց, քնքոյշ երերաց...

Սիրաշունչ կայսով զմայշեց և արքան  
Ու քէֆի միջին՝ ասաց մոլեղին.  
— Ողջ ունեցած ահա այն աղջկան,  
Թէ կտայ նա ինձ կոյս մարմինն անդին...

Երկնեց գեղունին, հայեացքն իջեցրեց,  
Մաւերներ փռւեցին ձիգ թարթիչներից.  
Կանանց սրտերում նախանձը յարեց,  
Ու ժպիտը թռաւ տղայոց դէմքերից:

Երգիւը վրդավ, որպէս մի արձան՝  
Եկաւ ու կանգնեց գահլիճի մէջ-տեղ.  
Շունչ տռաւ քնարին մատերով անձայն,  
Գիղեցիկն երգեց, բողոքեց ահեղ:

Լուսն էր գահլիճը, ասես. — քարացած — ...  
Յանկայծ լարերը թռան մոլեղին.  
Կանգնած էր երգիչն անկեան, խոժոռած...  
Հեծծում էր անլար քնարը յատակին...

Իովորը խօսեց. — ևս այստեղ եկար  
Երգելու ձեզ սուրբ գեղեցկութիւնը.  
Բայց երեաց, որ եկած եմ շուկայ,  
Ուր վաճառւում է աստածութիւնը — ...

Արքայից. Արքան գունատւեց յանկարծ,  
« Եղթայելու, հրաժայից, « Հմբոստ  
Քնարերգին ».  
Երգիւը շղթայւած մեկնեց սիրապանձ.  
Հայեացք խնկելով լոյս-կոյսի դէմքին:

Գեղունչին նրան սիրակէղ ժպտաց,  
Ասես. — Եալշողաց դէմքին ծիածան — ...  
Արքայի սիրան այդ տեսքից թնդաց.  
Այեն ինչ նորէն խոստացաւ նրան:

Մարգարիտա շարւան շուրթերին բոսր  
Մաքում « կինն » ասաց. — Ի՞նչ երջանկութիւն  
Եւ ինչ պիտ տամ որ... մաէ մի կտոր — ...  
Ու տւեց փողին սուրբ գեղեցկութիւնն...

Մի քանի տարի կիրք տեսչով անսանձ  
Ողին այն մարմնի արքան վայելեց.  
Լոյս-շող էութիւնը կորած էր անդարձ  
« Նոր » մարմին առաւ ու հինը մերժեց...

Յ Ա Յ Ա.

Տ Ի Ե Զ Ռ Ո Ւ Խ Մ.

Ք Ռ Ը Վ Ր Ն, Հ Ե Ժ Ժ Ժ Ա Մ Ւ Մ է ք ա մ ի ն,  
Խ Ե Խ Թ, Թ Ա Կ Բ Բ բ ա ց՝ թ ո չ ո ւ մ ս ա ր ե ր ի ն:  
Խ Ե Շ Շ, Փ Ե Շ, ա ն տ ա ռ ն է խ շ շ ս ւ մ,  
Դ լ ո ւ խ ը կ ա խ ա ծ՝ գ ա ր ո ւ ն ը յ ի շ ո ւ մ:

Վ ա շ շ վ ի շ, վ ա շ շ վ ի շ գ ե տ ա կ ն է լ ա լ ի ս,  
Փ ր փ ր ա յ ո յ դ կ ո ւ ր ծ ք ը ք ա ր ե ր ի ն տ ա լ ի ս:  
Հ ո ն գ ո ւ ր հ ո ն գ ո ւ ր լ ա լ ի ս է ո ւ ր ի ն,  
Մ ր մ ո ւ ռ ը խ ա ռ ն ո ւ մ գ ե տ ի փ ր փ ո ւ ր ի ն:

Օ ր ծ ր շ ո ր ն ը լ ո ւ ս ի ն ն է լ ո ղ ո ւ մ,  
Ճ ե ր մ ա կ ս ա ւ ա ն ո վ ե ր կ ի ը ք օ ղ ո ւ մ:  
Մ ո ւ շ մ ո ւ շ, ա ն ո ւ շ, Տ ի ե զ ր ի գ ր կ ի ն՝  
Ե ր գ ե ր է հ ի ւ ս ո ւ մ ի մ մ ա ս ն ի կ հ ո վ ի ն:

Ե ս գ ի տ ե մ թ ո չ ն ի կ ը լ բ ո ւ լ ի ց ք ն ք ո յ շ,  
Ե ս գ ի տ ե մ ս ո ւ լ ո ց ե ր գ ե ր ի ց ա ն ո յ շ,  
Ե ս գ ի տ ե մ ե ր ա զ կ ե ա ն ք ի ց է լ ք ա ղ ց ր ի կ,  
Ե ս գ ի տ ե մ տ ե ս ի լ ք ա ն հ ո ւ ն ի ց գ ո ղ տ ր ր կ:

Ե ր բ ք ն ք ո յ շ հ ա զ ի ս մ ե ն ա կ ո ւ մ ո լ ո յ ր,  
Շ ր ջ ո ւ մ է հ ա ն դ ա ր ա, լ ք ւ ա ծ, գ լ խ ի կ ո ր  
կ ե ա ն ք ի բ ի ւ ր ա ւ ո ր ա ւ ե ր ա կ ն ե ր ո ւ մ,  
Ի ղ ձ ե ր ա զ ն ե ր ի ս ո ւ ր բ բ ե կ ո ր ն ե ր ո ւ մ:

Ե ր բ ա ն յ ժ, ա ն յ ժ յ ս, մ ա ր ո ղ ա ս տ ղ ի պ է ս  
Պ ո ւ տ ո ւ մ ե մ ա ն վ ե ր ջ ս և գ ի շ ե ր ի պ է ս  
Ա ն թ ա փ ա ն ց կ ե ա ն ք ի ա ն ա պ ա տ ձ ա մ բ ի ն ...  
Ե ր բ հ ե զ լ ո ւ ս ն ի պ է ս՝ ի մ ք ն ք ո յ շ հ ո գ ի ն  
Փ ն տ ր ո ւ մ է լ ո ի կ մ ի ժ պ ի տ թ ո վ ի չ ...  
Բ ա յ ց շ ո ւ ր ջ ս ա ւ ե ր, մ ա ր ա ծ ա մ ե ն ի ն չ ...

Ե ր բ ա յ դ ս և պ ա հ ի ն, ո ր պ է ս ե ր կ ն ի լ ո յ մ  
Ա հ ա պ ի տ ը ն կ ն ե մ լ ք ւ ա ծ ո ւ ա ն յ ո յ ս  
Հ ո գ ո յ ս ա ն հ ո ւ ն ի լ ա ղ ո ւ ր ե թ ե ր ի ց,  
Ն ե ր ք ի ն ա շ խ ա ր հ ի ս բ ի ւ ր ե ղ ա փ ե ր ի ց՝

Մ ի ս ի ր ո ւ ն թ ո չ ն ի կ ս ո ւ լ ո ւ մ է ք ն ք շ ի կ  
Մ ի չ ք ն ա զ ե ր ա զ, մ ի ց ն ո ր ք ա ն ո ւ շ ի կ  
Ո ւ հ ո գ ի ս գ ի ւ թ ա ծ, հ ո վ ի թ ե ե ր ո ւ լ  
Դ է պ վ ե ր է հ ա ն ո ւ մ ն ո ր, ս հ ւ ր ի ղ ձ ե ր ո վ:

\* \* \*

Մի զիակ կայ  
Ոտքիս տակին  
Այն սկ, սրբկայ  
Մահն է զետնին:

Մի զենք ունիմ  
Զեռքիս սուրբ-լոյս.  
Քնարն է իմ  
Լոյս-կոյս հոգոյս:

Լոյս փունջ անվիշտ  
Ունիմ ձեռքիս.  
Նրա մէջ ընդմիշտ  
Շնունչա, հոգիս:

Կոյս մտքիս մէջ  
Գրանիտ լեռ կայ  
Անխախտ, անշէջ  
Հաւատոս է նա:

## ՀԱՅՐԵՆԻ

## ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ն Ա Խ Ե Բ Գ Ա Ն Ք.

Ալեղարդ Մաս'սի լայնածալ վէշին՝  
Մեղմ օրորւում են ծաղկունքը պէս-պէս...  
Զեփիւոը անոյշ բուրմունք լի ծոցին՝  
Ծաղկանց փարսելով թռչում է վէս-վէս...

Անսահման երկնի փիրուզ հայելուց՝  
Ժպտում է հանգարտ փերին ոսկեզօծ,  
Ոլորապտոյտ սիզաւէտ դաշտից՝  
Արաքսն է վազում ողջ արծաթէ-օձ:

Անդըրը է խորին, ծաղկունքը չուսս դին՝  
Կանգնած է մէնակ աղջիկ մը գունատ.  
Երկնի մովի մէջ խոհերը ճակտին՝  
Նայում է խրնիստ Մասիսն ալեղարդ:

## I.

Մնջեց Արաքսը, մարեցին զովհնավ,  
Ծաղկունքը հանդարտ գլուխները կախին,  
Աղջիկը փարւած ծերունու փեշքով՝  
Դշտաբեկ խօսեց, արցունք լի աչքին.

«Վիրաւոր սրտով, ճողիս լի բոզոք»  
«Աղաչում եմ քեզ, ալեզարդ Մասիս»;  
«Ասա, մւը ընկաւ կռւխին անողոք,  
«Ասա, ի՞նչ եղաւ եղբայրս ազիզ!»

«Անժպիտ ճամբիս մանուկ օրերից»  
«Մէկ-մէկ մարեցին յոյսերս ծաղիկ»;  
«Վիրաւոր, անյայտ, միակ, եղբօրից»  
«Աղաչում եմ քեզ, տնւր ինձ մի խարրիկ»;

«Բայց... լուս հս, խոժնո, հայեացքդ դէպ վեր,  
«Ճերմակ ալիքդ արեի շողքին...»  
«Ա՛խ, միթէ զուք են իմ ջերմ արցունքներ,  
«Միթէ չկս տեսնում իմ աւեր հոգին»:

## II.

Ուռիքը լալկան, գլուխները կախած  
Հեծծում են ասես վիշտն աղջկայ,  
Վշշումէ գնաը, վազում փրփրած,  
Որպէս վիրաւոր առիւծ մը հսկայ:

Մեզմ օրօրւում են ծաղկունքը տխուր,  
Հովի հետ փո'սում ցօղերն ուսին,  
Կանգնած է հսկան խոժուած ու լուր  
Հայեացքը գամած հեռու հիւսիսին:



IV.

Յուղւեց Արաքսը. խայթւած օձի պէս՝  
Գալարումներով զարկւեց ափերին...  
Ազատ գաշտի մէջ մռնչաց, ասես.  
«Շանթել էր ուզում կողերը ծհրին»...  
Ու այսպէս խօսեց.

«Թնդ ուռին վշշայ, ափերիս գամւած,  
«Մասիսը սպայ, լեռ-սիրաց ապառաժ,  
«Թնդ ամբոխը լայ, կոյր ու շղթայւած.  
«Ծերերը սպան, դողդոջ ու անշարժ.

«Բայց... դու, նվ աղջիկ, դեռ հոգի եռուն,  
Թէ կուգիս ապրել ազատ ու անպարտ  
«Եկ, դու էլ ճամբորդ անսահման հեռուն,  
Եկ, դու էլ ընկեր ալեացս անյաղթ».

Ասաց ու զարկւեց քարոտ ափերին,  
Ուսերին առաւ ծածկոցը փրփուր,  
Ողջ արծաթէ օձ ֆշոց շուրթերին՝  
Առաջ ընթացաւ ուորներով բիւր:



III

Սոսս սիսը խօսեց. «Ասա, նվ աղջիկ,  
«Ինչու ես եկել փեշերս տխուր .  
«Միթէ չես տեսնում շուրջս մնջած դիք,  
«Միթէ չես տեսնում խոցերս բիւր-բիւր...  
  
«Հասօն եմ կանգնած երկնի մովի մէջ.  
«Շուրջս՝ բալէքս-կին, մանուկ և ծեր  
«Զանում են երնել բարձունքս անվերջ.  
«Բայց... սանդուխքիս մէջ վրէժն է պահ մտել...  
  
«Ուփ, էլ մի խօսիր, եւ դու էլ առաջ.  
«Տես, այն բիւրաւոր մայրերին, մանկանց.  
«Թնդ ես մորմոքամ հեռու, անհոռամչ,  
«Թնդ ես մոռանամ վէրքերս անանց...»

---

ՀՀ Ազգային գրադարան



NL0352644

45530